ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

14.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ

թիվ ՍՑ-ԱՄ-2018/43

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.04.2018թ. թիվ 03/26-3/6785-18 գրությամբ «Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 10.04.2018թ. թիվ 7/01/2/4225-18 գրության հիման վրա, 12.04.2018թ. թիվ 03/26-3/6785-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 26.04.2018թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից պետական բյուջե ուղղված 240 000 ՀՀ դրամ փոխանցումը տեխնիկական խնդիրներով պայմանավորված չի իրականացվել 06.03.2018թ., և գումարը մնացել է Ընկերության հաշվին, որը հաշվապահը նկատել է ավելի ուշ և նորից փոխանցում է կատարել արդեն 16.03.2018թ.: Արդյունքում հայտի ներկայացման օրը՝ 09.03.2018թ., արձանագրվել է 227 000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն:

Ընկերությունը խնդրել է, հաշվի առնել այն հանգամանքը, որ սա նմանատիպ առաջին դեպքն է և պատժամիջոց չկիրառել:

Ընկերությունը կից ներկայացրել է փոխանցման քաղվածքը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/43 ընթացակարգի շրջանակներում 17.04.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը և նշել, որ Ընկերությունը դիմել է բանկին՝ խնդրելով տրամադրել պարզաբանում, որը սակայն դեռևս չի տրամադրվել:

3. **<u>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.04.2018թ. թիվ 7/01/2/4225-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար մեդալների և տուփերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/20» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցել է «Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ն, որը հայտերի բացման նիստում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Սահմանված կարգով կատարվել է հարցում՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, վերոհիշյալ ընկերության

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին: «Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ի հայտը մերժվել է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության հիման վրա:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/43 ընթացակարգի շրջանակներում 17.04.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը

4. ՍՑ-ԱՄ-2018/43 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/43 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար մեդալների և մեդալների տուփերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 09.03.2018թ. հայտ է ներկայացրել «Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 19.03.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 227 229 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 30.03.2018թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 02.05.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/7840-18 գրությամբ դիմել է Ընկերությանը սպասարկող «Արդշինբանկ» ՓԲԸ-ի Արաբկիր մասնաճյուղին՝ խնդրելով հայտնել, թե «Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ի կողմից վկայակոչված տեխնիկական խնդիրը պայմանավորված է եղել Բանկի գործողություններով, թե հանդիսացել է Ընկերության գործողությունների արդյունք:

6. «Արդշինբանկ» ՓԲԸ-ն 08.05.2018թ. թիվ 662-4032 գրությամբ հայտնել է, որ «Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ի կողմից 2018թ. ընթացքում 240 000 ՀՀ դրամի չափով փոխանցում ՀՀ պետական բնուջե չի կատարվել և հաճախորդի հիշատակած տեխնիկական խնդիրը պայմանավորված չէ բանկի գործողություններով:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.04.2018թ. թիվ 03/26-3/6785-18 գրությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 10.04.2018թ. թիվ 7/01/2/4225-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար մեդալների և մեդալների տուփերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***09.03.2018թ. հայտ է ներկայացրել «Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ն:***

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.03.2018թ. ժամը 10:00-ին նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ «Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-4-րդ, 6-8-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 15.03.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 19.03.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (09.03.2018թ.) ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 227 229 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 30.03.2018թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ի հայտը մերժվել է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 26.04.2018թ. գրությամբ «Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ն հայտնել է, որ Ընկերության՝ պետական բյուջե ուղղված 240 000 ՀՀ դրամ փոխանցումը տեխնիկական խնդիրներով պայմանավորված չի իրականացվել 06.03.2018թ., և գումարը մնացել է Ընկերության հաշվին, որը հաշվապահը նկատել է ավելի ուշ և նորից փոխանցում է կատարել արդեն 16.03.2018թ.:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 02.05.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/7840-18 գրությամբ դիմել է Ընկերությանը սպասարկող «Արդշինբանկ» ՓԲԸ-ի Արաբկիր մասնաճյուղին՝ խնդրելով հայտնել, թե «Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ի կողմից վկայակոչված տեխնիկական խնդիրը պայմանավորված է եղել Բանկի գործողություններով, թե հանդիսացել է Ընկերության գործողությունների արդյունք, որին ի պատասխան «Արդշինբանկ» ՓԲԸ-ն 08.05.2018թ. թիվ 662-4032 գրությամբ հայտնել է, որ «Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ի կողմից 2018թ. ընթացքում 240 000 ՀՀ դրամի չափով փոխանցում ՀՀ պետական բնույթ չի կատարվել և հաճախորդի հիշատակած տեխնիկական խնդիրը պայմանավորված չէ բանկի գործողություններով:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 19.03.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (09.03.2018թ.) ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 227 229 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը: Մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:***

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված լիազորված մարմին, «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ նշել է, որ եթե Կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և մասնակիցը կամ Կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը պատվիրատուին չի ներկայացրել մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ապա անկախ նշված ժամկետից հետո մասնակցի կողմից լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու հանգամանքից, պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

Ընդ որում, այս դեպքում նկատի ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունենալու վերաբերյալ, սակայն Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությամբ արձանագրվում է ժամկետանց պարտավորություն-ների առկայությունը, ***ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որի արդյունքում դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:***

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանումը, գտնում եմ, որ «Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ի կողմից «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.04.2018թ. թիվ 03/26-3/6785-18 գրությամբ «Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 00010371) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ուրարտու» ԱԱԿ ԲԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**